# Դրամաշնորհային հաշվետվություն N 2

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| **Դրամաշնորհի N** | 1032-11002/24 ԼՄ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2024-31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2024- 31.12.2024 |
| **Ներկայացման օր** | 20.12.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Կարինե Կուրղինյան<br>Ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**
**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Լոռու մարզի Սպիտակ և Վանաձոր համայնքներում Լոռու մարզային մասնաճյուղի կողմից շարունակել է տնային խնամքի ծառայության մատուցումը պետական դրամաշնորհի շրջանակներում: Հաշվետու եռամսյակի ընթացքում 3 նոր շահառուներ են ընդգրկվել ծրագրից դուրս եկած 3 շահառուների փոխարեն: Սոցիալական աշխատողը կատարել է նոր շահառուների կարիքների գնահատում, ՄՍԾ Վանաձորի և ՄՍԾ Սպիտակի տարածքային կենտրոններ է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (դիմում հայտ, քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից և այլ )՝ ՀԿԽԸ «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրում ներառվելու համար: Շահառուները, ունենալով առողջական լուրջ խնդիրներ, դժվարացել են ինքնուրույն այցելել բուժամբուլատորիա և տարածքային կենտրոն, ուստի նրանց համար այդ ամենը կազմակերպվել է ՀԿԽԸ Լոռու ՄՄ սոցիալական աշխատողի և բուժքույրերի կողմից՝ համապատասխան լիազորագրերով:<br>Հաշվետու եռամսյակում սպասարկվել է 27 շահառու, որից 13-ը՝ Սպիտակ, 14-ը՝ Վանաձոր: Դրամաշնորհի շրջանակներում խնամքի ծառայություն ստացող բոլոր շահառուներն ունեն ուղեգրեր:<br>Յուրաքանչյուր սպասարկվող շահառուի համար կազմված է անհատական խնամքի պլան՝ ելնելով վերջինիս կարիքների առանձնահատկություններից, որի համաձայն էլ իրականացվում է խնամքի տրամադրումը: Վեց ամիս ծառայություն ստացած խնամառուների համար խնամքի պլանները վերանայվել և թարմացվել են հաշվետու եռամսյակի ընթացքում:<br>Խնամքի տրամադրման գործողությունների և տրամադրված խնամքի պարագաների վերաբերյալ կատարվել են համապատասխան գրառումներ խնամառուների դինամիկ հսկողության թերթիկներում, ինչպես նաև խանամառուների անձնական թղթապանակում:<br>Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝<br>• սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում, ներառյալ խնամքի պարագաների տրամադրում,<br>• կենցաղային օգնություն և սպասարկում,<br>• կամավորների այցելություններ,<br>• սոցիալական աշխատողի այցելություն, գնահատում, ուղղորդում<br>• հոգեբանի խորհրդատվություն,<br>• մշակութային միջոցառումների կազմակերպում,<br>• մոնիտորինգային աշխատանքներ: |

Հաշվետու ժամանակահատվածում ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի բուժքույրի և Լոռու ՄՄ տնային խնամքի պատասխանատուի մասնակցությամբ կատարվել են մոնիթորինգային այցեր ծրագրի շահառուներին՝ խնամքի որակի և սպասարկող անձնակազմի կատարած աշխատանքների վերահսկողության, ինչպես նաև շահառուների կարծիքները և առաջարկությունները լսելու նպատակով:
Մշտական համագործակցություն է իրականացվել ՄՍԾ Վանաձորի և Սպիտակի ՏԿ տնօրենների և մասնագետների հետ՝ քննարկելով կարիքի գնահատում անցած անձանց առանձին դեպքեր, տեղեկանալով ուղեգրումների կամ մերժումների մասին:
Իրականացվել է 11 անհատական դեպքի վարում՝ կապված անապահովության նպաստի վերականգնման և փաստագրման, եռամսյակային հրատապ օգնության դիմումի ներկայացման հարցերի, ՄՍԾ տեսուչների հետ խորհրդատվության, բնակարան ստանալու հարցով խորհրդատվության, շահառուների համար ՄՍԾ միջոցով հիգիենիկ աթոռ ստանալու համար փաստաթղթերի ներկայացման հետ, այնուհետև սոց. աշխատողը շահառուի փոխարեն ստացել է աթոռը և տեղափոխել ք. Սպիտակ՝ շահառուի տուն, կազմակերպել առաջնային բուժօգնության օղակի թերապևտների և այլ նեղ մասնագետների տունայց:
Շահառուների համար կազմակերպվել է 2 սոցիալական միջոցառում: 12.12.2024-ին Վանաձոր քաղաքում՝ ՀԿԽԸ Լոռու ՄՄ գրասենյակում շահառուները մասնակցել են թեյի շուրջ հյուրասիրության և կամավորների հետ երկխոսության ցերեկույթի: Ներկա էին ՀԿԽԸ Լոռու ՄՄ գործադիր տնօրենը, սոց. աշխատողը, 2 բուժքույր, տնային խնամքի ծառայության 5 կամավորներ: Շահառուները ներկայացան իրենց պատմություններով, կիսվեցին իրենց կյանքից հետաքրքիր դրվագներ: Շահառուները շատ դրական արձագանքեցին ՀԿԽԸ նախաձեռնություններին, հնչեցին շնորհակալական և գովասանքի խոսքեր: Շահառուներից ոմանք ասմունքեցին, երգեցին, եղան նաև հուզիչ պահեր, երբ խոսում էր Արցախից բռնի տեղահանված շահառուն: Կից ներկայացվում են նկարներ և տեսագրություններ:
Հաջորդ միջոցառումը 13.12.2024-ին ք. Սպիտակում էր՝ ՀԿԽԸ Լոռու ՄՄ Սպիտակի գրասենյակում, նույն բնույթի, ինչ Վանաձորում էր՝ թեյախմություն և երիտասարդների հետ երկխոսություն: Մասնակցել են Լոռու ՄՄ Սպիտակի ներկայացուցիչը, սոց. աշխատողը, բուժքույրը և տնային խնամողները, կամավորներ: 2 միջոցառումների դեպքում էլ կամավորները տանից գրասենյակ և հետ ուղեկցել են շահառուներին:
Տնային խնամքի ծառայություն ստացող խնամառուները անհրաժեշտության դեպքում հեռախոսային կապով ահազանգում են իրենց խնդիրների մասին, որոնց արագ արձագանքում է խնամքի անձնակազմը, կարիքի դեպքում ներգրավում գործընկերներերի, կատարում համապատասխան ուղղորդումներ:
Բացի պլանավորված այցելություններից, պարբերաբար, հեռախոսակապի միջոցով ծրագրի աշխատակիցները փորձել են իրազեկ լինել շահառուների վիճակի մասին և արձագանքել՝ ըստ անհրաժեշտության: Շարունակական են նաև կամավորների կողմից կատարվող այցերը և աջակցության տրամադրումը վերջիններիս համար գնումների կազմակերպման, զրույցի, զբոսանքի, ընթերցանության և այլ հարցերում:
2024 թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում տնային խնամքի ծառայության շրջանակներում սպասարկվել է ընդհանուր թվով 27 շահառու:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում, ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ միջոցառումները.<br>• Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում՝ խնամքը տրամադրվել է խնամք իրականացնող անձնակազմի՝ բուժքույրերի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Այն ներառել է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման և այլն: Կարիքի դեպքում, խնամքին զուգահեռ խնամառուները ապահովվել են նաև խնամքի միջոցներով:<br>• Տնային խնամողների կողմից կենցաղային օգնություն և սպասարկում է տրամադրվել շահառուներին, մասնավորապես անձնական հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Ծառայությունը տրամադրվել է տնային խնամողների կողմից:<br>• Կամավորների այցելություններ, ներառյալ ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում, այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Կամավորների գործունեությունը նպաստում է նաև շահառուների սոցիալիզացիային:<br>• Սոցիալական աշխատողն իրականացրել է խորհրդատվության տրամադրում, գնահատում, ուղղորդում՝ տարածքային ՄՍԾ մասնագետների հետ սերտ համագործակցությամբ, կազմակերպել է երկու միջոցառում՝ ընդգրկելով ծրագրում ներառված շահառուներին: Սոց. աշխատողը 04.12.2024-ին մասնակցել է «Նորք» տեխնոլոգիական կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացին՝ ուղղված շահառուների տվյալների բազայի հետ աշխատանքներին:<br>• Շահառուների առողջական վիճակի արդյունավետ վերահսկողության համար խնամքի բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել տեղամասային բժիշկների հետ: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են բժիշկների տնային այցեր:<br>• ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի ծրագրի պատասխանատուն և ծրագրի համակարգողը իրականացրել են մոնիտորինգային աշխատանքներ՝ այցելելով սպասարկվող շահառուների տներ՝ գնահատելու մատուցվող ծառայությունների որակը:<br><br>Հայկական Կարմիր խաչի ընկերությունը անդամակցում է տարեցների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովին, Տարեցների պաշտպանության ցանցին, որի հերթական հանդիպումը տեղի է ունեցել ս/թ նոյեմբերի 15-ին, հեռավար տարբերակով՝ ՀԿԽԸ նախաձեռնությամբ և համակարգմամբ: |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Սույն եռամսյակով ավարտվում է Լոռու մարզում պետական դրամաշնորհի շրջանակներում տնային խնամքի ծառայության տրամադրումը տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց:
ՀԿԽԸ-ը շարունակելու է տնային խնամքի ծառայությունների մատուցումը՝ կարևորելով և զարգացնելով մատուցման որակը, արդյունավետությունը, մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև իր ներդրումն է ունենալու Հայաստանի Հանրապետությունում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտային զարգացումներում:
Կազմակերպվելու են միջոցառումներ, հանդիպումներ շահառուների տարբեր խմբերի համար՝ նրանց ակտիվ և արժանապատիվ կյանքի որակ ապահովելու նպատակով:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում նման գործողություններ չեն իրականացվել: